ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հարությունյան, Ա. Սարգսյան, Կ. Հարությունյան, Ռ. Աբրահամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ներսիսյան

1. Շտկված անհամապատասխանությունների մասին

(Ա. Կիրակոսյան)

1.1. Նիստի անցկացման.

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ
-օրը՝ 29.01.2020 թ.
-ժամը՝ 11:00

1.2 «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատեց բավարար:

1.3. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգին բավարար հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

	Մասնակցի անվանումը	Գնահատման արդյունքները
1	«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման մասին

(Ա. Կիրակոսյան)

2.1 Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի **15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա.** որոշեց նիստը կասեցնել, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 2020 թ.-ի **փետրվարի 4-ին ժամը 11:30-ին Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1, 321 սենյակ) հասցեում**:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի փետրվարի 4-ին ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Կիրակոսյան
Անդամներ՝		Ա. Հարությունյան
		Ա. Սարգսյան
		Կ. Հարությունյան
		Ռ. Աբրահամյան
Համակարգող՝		Ա. Ներսիսյան